Հավելված N 8
ՀՀ կառավարության 2021 թվականի
հոկտեմբերի 14-ի N 1681 - Ն որոշման

Կ Ա Ր Գ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ «ՈՉՆՉԱՑՈՒՄ» ՄԱՔՍԱՅԻՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳՈՎ ՁԵՎԱԿԵՐՊՎՈՂ ԱՊՐԱՆՔԻ ՈՉՆՉԱՑՄԱՆ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅԱՆ, ՎԱՅՐԻ ԵՎ ԵՂԱՆԱԿԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅԱՆ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ

1. Սույն կարգով կանոնակարգվում են «Ոչնչացում» մաքսային ընթացակարգով ոչնչացման նպատակով Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության ծառայության կողմից ոչնչացման հնարավորության, վայրի և եղանակի վերաբերյալ եզրակացության տրամադրման համար փաստաթղթերի ներկայացման, դրանք քննության առնելու ժամկետների, եզրակացության տրամադրման հետ կապված հարաբերությունները:

2. Եզրակացություն ստանալու համար հայտարարատուն առձեռն, փոստով կամ էլեկտրոնային եղանակով լիազոր մարմին է ներկայացնում դիմում, որը պարունակում է հետևյալ տեղեկությունները՝

1) իրավաբանական անձի դեպքում՝ անվանումը, պետական գրանցման համարը, անհատ ձեռնարկատիրոջ դեպքում՝ անհատ ձեռնարկատիրոջ անունը, ազգանունը, հաշվառման համարը, ֆիզիկական անձի դեպքում՝ անունը, ազգանունը, հայրանունը, անձը հաստատող փաստաթղթի տվյալներ, ինչպես նաև հայտարարատուի գրանցման և գործունեության իրականացման վայրերի հասցեները.

2) ապրանքի անվանումը.

3) արտաքին տնտեսական գործունեության ապրանքային անվանացանկին (ԱՏԳ ԱԱ) համապատասխան ապրանքի ծածկագիրը.

4) ապրանքի քանակը, ծավալը.

5) ապրանքի նկարագիրը.

6) ապրանքի վտանգավոր հատկությունները (առկայության դեպքում).

7) ապրանքի՝ «Ոչնչացում» մաքսային ընթացակարգով հայտարարագրման համար հիմք ծառայած պատճառը:

3. Լիազոր մարմինը հայտարարատուի ներկայացրած տեղեկությունների հիման վրա 10 աշխատանքային օրվա ընթացքում տալիս է եզրակացություն:

4. Եզրակացություն ստանալու մասին դիմումը լիազոր մարմնի կողմից մերժվում է, եթե սույն կարգով նշված տեղեկությունները թերի են, որի վերաբերյալ լիազոր մարմինը 3 աշխատանքային օրվա ընթացքում տեղեկացնում է հայտարարատուին և հայտարարատուն 3 աշխատանքային օրվա ընթացքում չի վերացնում դիմումում կամ կից փաստաթղթերում առկա թերությունները:

5. Եզրակացություն ստանալու համար ներկայացված դիմումի մերժման կամ բացասական եզրակացության մասին որոշում ընդունելուց հետո լիազոր մարմինը 2 աշխատանքային օրվա ընթացքում գրավոր (էլեկտրոնային եղանակով, փոստով կամ առձեռն) տեղեկացնում է հայտատուին՝ նշելով մերժման հիմքերը:

6. Եզրակացությունը կորցնելու (ոչնչացվելու և այլն) դեպքում լիազոր մարմնի կողմից կտրամադրվի եզրակացության կրկնօրինակը, որի աջ անկյունում կատարվում է դրոշմակնքում՝ «Կրկնօրինակ» բառով:

7. «Ոչնչացում» մաքսային ընթացակարգի կիրառումն իրականացվելու է լիազոր մարմնի վարչական տարածքում, նախապես ընտրված վայրում և էկոլոգիապես անվտանգ եղանակով՝ կախված ոչնչացվող ապրանքների տեսակից (քանդման, ջարդման կամ մանրացման ճանապարհով):

8. Եզրակացությունը կարող է տրվել թղթային կամ էլեկտրոնային փաստաթղթի տեսքով՝ հաստատված սահմանված կարգով:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

14.10.2021
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ